

Թղթե քաղաքներ

«Նյու Յորք թայմզի»
#1 թեստակերտների հեղինակ

Ջոն Գրին

*«Նյու Յորք թայմզի» կողմից թեստակերտներ
ձևաչափած «Փարրեթով Այասկան», «Բազում
Քեթրիններ» և «Աստղերն են մեղավոր»
գրքերի հեղինակ*



**Նվիրվում է Ջուլի Շարաուս-Գեյրելին, առանց
որի այս ամենը հնարավոր չէր լինի:**

ՆԱԽԱԲԱՆ

Կարծում եմ՝ բոլորի հետ էլ մի հրաշք պատահում է: Օրինակ՝ ինձ երևի երբեք կայծակը չի խփի, կամ ես երբեք Նորեյան մրցանակ չեմ շահի, Խաղաղ օվկիանոսի կղզիների փոքր ժողովուրդներից մեկի բռնապետ չեմ դառնա, ականջի անբուժելի քաղցկեղով չեմ հիվանդանա, հանկարծակի ներսից չեմ բռնկվի ու այրվի, բայց, ընդհանուր առմամբ, այդ բոլոր անհավանական բաներից գոնե մեկը կարող է տեղի ունենալ յուրաքանչյուրիս հետ: Ես կարող էի գորտերի անձրև տեսած լինել: Կարող էի ոտք դրած լինել Մարսի վրա: Ինձ կարող է կետամուկը կերած լինեք: Կարող էի Անգլիայի թագուհու հետ անուսնացած լինել կամ ամիսներով ծովում կլանքի և մահու կռիվ տալ: Բայց իմ հրաշքն ուրիշ էր: Ահա իմ հրաշքը, ամբողջ Ֆլորիդայի բոլոր վարչական շրջանների բոլոր տներից հենց Մարգո Ռոբ Մալիգլմենի հարևանությամբ գտնվողն էր ինձ բաժին ընկել:

Մեր վարչական շրջանը՝ Ֆեֆերտն Փարքը, նախկինում նավատորմի ռազմարագա է եղել: Բայց հետո նավատորմն այլևս դրա կարիքը չունեք, ու հողատարածքը վերադարձվեց Ֆլորիդայի Օւլանդո քաղաքի բնակիչներին: Նրանք էլ որոշեցին այդտեղ մի խոշոր շրջան կառուցել, քանի որ Ֆլորիդան սովորաբար այդպես է վարվում հողատարածքների հետ: Երբ առաջին տները կառուցեցին, ծնողներս ու Մարգոյի ծնողները բնակություն հաստատեցին միմյանց հարևանությամբ: Այդ ժամանակ Մարգոն ու ես երկու տարեկան էինք:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ
ԼԱՐԵՐՆ ՈՒ ԹԵԼԵՐԸ

I.

Կանքիս ամենաերկար օրը դանդաղ սկսվեց, առավոտյան ուշ վեր կացա, երկար լոզանք ընդունեցի և ստիպված էի նախաճաշ ուտել մայրիկիս ֆուրգոնում ժամը յոթն անց տասնյոթին, չորեքշաբթի էր:

Սովորաբար դպրոց էի գնում լավագույն ընկերոջս՝ Բեն Սթարլինգի մեքենայով, բայց Բենը ժամանակին էր դպրոց գնացել՝ ինձ համար «ոչ պիտանի» դառնալով: «Ժամանակին» դպրոց գնալը մեզ մոտ դասերից երեսուն րոպե առաջ այնտեղ լինելն էր համարվում, որովհետև առաջին զանգին նախորդող կես ժամը մեր սոցիալական օրացույցի կարևոր կետերից էր, պարզապես կանգնել նվազախմբի սենյակ տանող դռան մոտ և զբոցել: Ընկերներիս մեծ մասը նվազախմբի անդամ էր, ու դպրոցում ազատ ժամանակս առավելապես անցկացնում էի նրանց սենյակից վեց մետր այն կողմ: Ինքս նվազախմբի անդամ չէի, որովհետև տառապում եմ այնպիսի երաժշտական խլություն, որ սովորաբար կապում են իրական խլության հետ: Քսան րոպե ուշանում էի, ինչը նշանակում էր, որ, միննույնս է, դասերն սկսվելու իսկական ժամանակից դեռ տասը րոպե շուտ էի հասնելու:

Մեքենան վարելիս մայրս հարց էր տալիս դասերիս, ավարտական քննություններիս ու երեկոյթի մասին:

- Ավարտական երեկույթն ինձ չի հետաքրքրում,- շրջադարձ կատարելիս հիշեցրի՝ նախաճաշիս ափսոս հնտորեն այնպես պահելով, որ կտրուկ թերումից ուտելիքը չթափվի: